ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«22» փետրվարի 2021 թվականի N 107

ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹՆԵՐ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության համակարգող նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի թիվ 13-Ն հրամանով հաստատված «Համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու կարգի» 11-րդ կետի՝ *որոշում եմ.*

1. 2021 թվականի մարտի 31-ին անցկացնել մրցույթներ Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության հետևյալ թափուր պաշտոններն զբաղեցնելու համար.

1) Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի առաջատար մասնագետ (ծածկագիր 3.1-30) - ժամը 11:00-ին,

2) Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի առաջատար մասնագետ (ծածկագիր 3.1-32) - ժամը 11:00-ին,

3) Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի գլխավոր մասնագետ-ճարտարապետ (ծածկագիր 2.3-17) - ժամը 14:00-ին:

2. Մրցույթներն անցկացնել Սպիտակի համայնքապետարանի վարչական շենքում:

3.Մրցույթների անցկացման համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում հրապարակել հայտարարություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

2021թ. փետրվարի 22
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի քաղաքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«22» փետրվարի 2021թ. № 108

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, 48-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով, 24-րդ հոդվածի 4-րդ մասով, հիմք ընդունելով Սպիտակ համայնքի բնակիչների դիմումները և սոցիալական հարցերի հանձնաժողովի 2021 թվականի փետրվարի 22-ի թիվ 1 արձանագրությունը՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի 2020 թվականի բյուջեի «Այլ սոցիալական ծրագրեր» գործառական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» տնտեսագիտական դասակարգման 4729 հոդվածից Սպիտակ համայնքի բնակիչներին հատկացնել դրամական օգնություն ընդամենը 145 000 (հարյուր քառասունհինգ հազար) ՀՀ դրամի չափով՝ համաձայն հավելվածի:

2. Աշխատակազմի ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնին՝ ապահովել սույն որոշման կատարումը:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2021թ. փետրվարի 22
ք.Սպիտակ

Հավելված
Սպիտակ համայնքի ղեկավարի
2021թ. փետրվարի «22» թիվ 108 որոշման

Դրամական օգնություն ստացող քաղաքացիների ցուցակ

Հ/Հ	Անուն, ազգանուն	Սոց. քարտի համարը	Անձնագրային տվյալները	Գումարը ՀՀ դրամ
1	Կարինե Թումանյան	7512840055	AP0640719, տրված 02.12.2016թ., 052-ի կողմից	20 000
2	Սուսան Մանուկյան	6114880060	007951320, տրված 15.09.2015թ., 052-ի կողմից	15 000
3	Մանանա Սարաջյան	7104900568	AS0527150, տրված 26.03.2019թ., 052-ի կողմից	30 000
4	Գեղանուշ Ազատյան	6112460865	001180793, տրված 04.02.2014թ., 052-ի կողմից	25 000
5	Ջուլիետա Գրիգորյան	5514510050	AM0652549, տրված 27.02.2012թ., 052-ի կողմից	20 000
6	Աննա Գևորգյան	5407680475	AT0386551, տրված 14.02.2020թ., 052-ի կողմից	20 000
7	Սուսաննա Միքայելյան	7808490229	AH0270153, տրված 10.11.2006թ., 052-ի կողմից	15 000

Ընդամենը՝ 145 000 (մեկ հարյուր քառասունհինգ) ՀՀ դրամ

Աշխատակազմի քարտուղար՝ Ա. Գյուլազյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«22» փետրվարի 2021թ. № 109

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՄԱՄԻԿՈՆ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի թիվ 843-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի և Սպիտակ համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 63-Ն որոշման հավելվածի 1-ին կետի 7-րդ ենթակետի, հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Մամիկոն Առաքելյանի 2021 թվականի փետրվարի 19-ի հայտը՝ ***որոշում եմ.***

1. Անհատ ձեռնարկատեր Մամիկոն Առաքելյանին (ՀՎՀՀ 66003417) տալ «ք. Սպիտակ Կենտրոն 1, Ալեք Մանուկյան» հասցեում գտնվող խանութում (հիմնական շինություն՝ 40 քառակուսի մետր մակերես) ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների վաճառքի թույլտվություն 2021 թվականի համար՝ ըստ եռամսյակների:

2. Աշխատակազմի ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնին՝ ապահովել սույն որոշման 1-ին կետում նշված գործունեության թույլտվության համար նախատեսված տեղական տուրքերի գանձումը ըստ եռամսյակների և սահմանված կարգով տրամադրել թույլտվությունը հավաստող փաստաթուղթը:

Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

2021թ. փետրվարի 22
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«22» փետրվարի 2021թ. № 110

ԱՐՇԱԿ ՎՐԵԺԻ ԴԱՎԹՅԱՆԻՆ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԳՈՒՅՔ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 8-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման» կարգի 34.2-րդ կետով, 35-րդ կետի «դ» ենթակետով, հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 2021 թվականի հունվարի 26-ի թիվ 26012021-06-0030 վկայականը և Արշակ Դավթյանի համաձայնությունը՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող՝ «քաղաք Սպիտակ, Ալ.Մանուկյան փողոց, թիվ 97» հասցեում գտնվող 06-006-0276-0020 կադաստրային ծածկագրով 0,00948 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը կադաստրային արժեքով՝ 50 054 ՀՀ դրամ, իսկ օրինական ճանաչված 156,54 քառակուսի մետր մակերեսով ավտոտնակը 157 621 ՀՀ դրամ արժեքով՝ որպես կառույցն իրականացրած անձի, գնման նախապատվության իրավունքով օտարել Արշակ Վրեժի Դավթյանին (ծնված 08.08.1972թ.):

2. Արշակ Վրեժի Դավթյանի հետ կնքել անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր, որից ծագող իրավունքն օրենքով սահմանված կարգով ենթակա է պետական գրանցման:

3. Աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետին և աշխատակազմի ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնի պետին՝ սահմանված կարգով փոփոխություն կատարել համայնքի հողային հաշվեկշռում և ամենամյա գույքագրման փաստաթղթերում:

4. Սույն որոշման կատարման կազմակերպումը և հսկողությունը դնել աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետի վրա:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2021թ.փետրվարի 22
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«22» փետրվարի 2021թ. № 111

ԹԱՄԱՐԱ ՌԱՖԻԿԻ ՀՈՎԱԿԻՄՅԱՆԻՆ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԳՈՒՅՔ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 8-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման» կարգի 33.2-րդ և 34-րդ կետերով, 35-րդ կետի «բ» ենթակետով, հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 2021 թվականի հունվարի 26-ի թիվ 26012021-06-0044 վկայականը և Թամարա Ռաֆիկի Հովակիմյանի համաձայնությունը՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող, «քաղաք Սպիտակ, Երևանյան խճուղի, թիվ 97» հասցեում գտնվող 06-006-0094-0027 կադաստրային ծածկագրով 0,07689 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասից 0,020564 հեկտար մակերեսով հողամասը կադաստրային արժեքով՝ 108 578 ՀՀ դրամ, իսկ 0,056326 հեկտար մակերեսով հողամասը կադաստրային արժեքի եռապատիկի չափով՝ 892 204 ՀՀ դրամ, օրինական ճանաչված 50,99 քառակուսի մետր մակերեսով խանութը և 24,13 քառակուսի մետր մակերեսով տնտեսական պահեստը 795 827 ՀՀ դրամ արժեքով՝ որպես կառույցն իրականացրած անձի, գնման նախապատվության իրավունքով օտարել Թամարա Ռաֆիկի Հովակիմյանին (ծնված ծնված 14.06.1955թ.):

2. Թամարա Ռաֆիկի Հովակիմյանի հետ կնքել անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր, որից ծագող իրավունքն օրենքով սահմանված կարգով ենթակա է պետական գրանցման:

3. Աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետին և աշխատակազմի ֆինանսական և եկամուտների

հավաքագրման բաժնի պետին՝ սահմանված կարգով փոփոխություն կատարել համայնքի հողային հաշվեկշռում և ամենամյա գույքագրման փաստաթղթերում:

4. Սույն որոշման կատարման կազմակերպումը և հսկողությունը դնել աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետի վրա:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2021թ.փետրվարի 22
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«22» փետրվարի 2021թ. № 112

Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆ ՓՈՂՈՑԻ ՎՐԱ ԳՏՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ԿԱՌՈՒՅՑՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին պարբերությամբ, 4-րդ մասի 1-ին պարբերությամբ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված «Պետական կամ համայնքային հողամասերում գտնվող ինքնակամ կառույցների նկատմամբ պետության կամ համայնքների սեփականության իրավունքի պետական գրանցման կարգի» 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման 3-րդ կետով, նույն որոշմամբ հաստատված «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման» կարգի 33-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «ա» ենթակետով և 48-րդ կետով, հաշվի առնելով, որ Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող՝ Ս.Ավետիսյան փողոցի վրա գտնվող 06-006-0534-0007 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողեր գործառնական նշանակության հողամասից առանձնացված 0,08177 հեկտար մակերեսով հողամասի վրա 2003 թվականին ինքնակամ կառուցված 302,57 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով ավտոտեխսպասարկման կետի, 41,44 քառակուսի մետր մակերեսով կիսակառույցի և 13,8 քառակուսի մետր մակերեսով հենապատի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հողամասն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, հիմք ընդունելով «Տեխպրոյեկտ» ՍՊԸ-ի եզրակացությունը, և «Արսեն Իսահակյան Ռուդիկի» ԱՁ-ի կողմից տրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող՝ Ս.Ավետիսյան փողոցի վրա գտնվող 06-006-0534-0007 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային

նշանակության հողամասից առանձնացված 0,08177 հեկտար մակերեսով այլ գործառնական նշանակության հողամասի գործառնական նշանակությունը համարել փոփոխված՝ հասարակական կառուցապատման գործառնական նշանակության:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված՝ Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող՝ Ս.Ավետիսյան փողոցի վրա գտնվող 06-006-0534-0007 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային գործառնական նշանակության հողամասից առանձնացված 0,008177 հեկտար մակերեսով հասարակական գործառնական նշանակության հողամասի վրա կառուցված 302,57 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով ավտոտեխսպասարկման կետը, 41,44 քառակուսի մետր մակերեսով կիսակառույցը և 13,8 քառակուսի մետր մակերեսով հենապատը ճանաչել օրինական:

3. Սույն որոշման 2-րդ կետում նշված անշարժ գույքի նկատմամբ ճանաչել Սպիտակ համայնքի սեփականության իրավունքը:

4. Սույն որոշման 2-րդ կետում նշված անշարժ գույքին տրամադրել «ք.Սպիտակ, Ս.Ավետիսյան փողոց, թիվ 394» հասցեն:

5. Սույն որոշումը 5-օրյա ժամկետում տրամադրել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտե՝ սահմանված կարգով պետական գրանցում կատարելու համար:

6. Իրավունքի պետական գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկություն ներկայացնել կառույցն իրականացրած Ալիկ Սեդրակի Պողոսյանին (ծնված 03.01.1983թ.) օրինականացված կառույցները և դրանց պահպանման և սպասարկման համար անհրաժեշտ հողամասը սահմանված կարգով և գներով սեփականության իրավունքով կամ վարձակալությամբ ձեռք բերելու համար:

7. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու հսկողությունը դնել աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետի վրա:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2021թ. փետրվարի 22

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«22» փետրվարի 2021թ. № 113

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԳԱԳԻԿԻ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ԵՎ ՄԱՐԻՆԵ ԺՈՐԺԻԿԻ ԼԱՄԲԱՐՅԱՆԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԴԵՂԱՏՈՒՆՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերությամբ, 4-րդ մասով, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 7-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման» կարգի 18-րդ կետի «բ» ենթակետով, հաշվի առնելով, որ Հարություն Գագիկի Հակոբյանին և Մարինե Ժորժիկի Լամբարյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով իրեն պատկանող՝ Շահումյան փողոց, թիվ 3/1 հասցեում գտնվող 06-006-0498-0032 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության 0,05391 հեկտար մակերեսով հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա 2020 թվականին ինքնակամ կառուցել է 23,49 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով դեղատուն, որի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 31032014-06-0017 վկայականը, «Տեխպրոյեկտ» ՍՊԸ եզրակացությունը և Հարություն Գագիկի Հակոբյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Հարություն Գագիկի Հակոբյանին և Մարինե Ժորժիկի Լամբարյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող, Սպիտակ համայնքի Շահումյան փողոց, թիվ 3/1 հասցեում գտնվող 06-006-0498-0032 կադաստրային ծածկագրով 0,05391 հեկտար մակերեսով հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա ինքնակամ կառուցված 23,49 քառակուսի մետր մակերեսով դեղատունը ճանաչել օրինական:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքի նկատմամբ ճանաչել Հարություն Գագիկի Հակոբյանի և Մարինե Ժորժիկի Լամբարյանի սեփականության իրավունքը:

3. Սույն որոշմամբ ծագող իրավունքը ենթակա է պետական գրանցման:

4. Հարություն Գագիկի Հակոբյանին և Մարինե Ժորժիկի Լամբարյանին.

1) համայնքի բյուջե վճարել 48 435 ՀՀ դրամ օրինականացման վճար:

2) Ընդունել ի գիտություն, որ սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը՝ 60-օրյա ժամկետում չվճարման դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

5. Քարտուղարության բաժնին՝ սույն որոշման մեկ օրինակը 5-օրյա ժամկետում տրամադրել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտե:

6. Սույն որոշման կատարման կազմակերպումը և հսկողությունը դնել աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետի վրա:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2021թ. փետրվարի 22
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«22» փետրվարի 2021թ. № 114

Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 158 ՀԱՍՑԵՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերությամբ, 4-րդ մասով, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 7-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման» կարգի 10-րդ, 13-րդ և 22.1-րդ կետերով, հաշվի առնելով, որ Վիտխար Ասքանազի Խաչատրյանին սեփականության իրավունքով պատկանող՝ Ս.Ավետիսյան փողոց, թիվ 158 հասցեում գտնվող 06-006-0040-0056 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0,13696 հեկտար մակերեսով հողամասի վրա 1992 թվականին ինքնակամ կառուցված 17,15 քառակուսի մետր մակերեսով անասնաշենքի, 2007 թվականին ինքնակամ կառուցված 10,48 քառակուսի մետր մակերեսով խոհանոցի, 9,26 քառակուսի մետր մակերեսով մառանի, 7,25 քառակուսի մետր մակերեսով սանհանգույցի, 23,76 քառակուսի մետր մակերեսով ծածկարանի, 15,84 քառակուսի մետր մակերեսով բաց պատշգամբի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, դրանք կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 26082020-06-0018 վկայականը, «Տեխպրոյեկտ» ՍՊԸ եզրակացությունը և Վիտխար Ասքանազի Խաչատրյանի դիմումը՝ *որոշում եմ.*

1. Վիտխար Ասքանազի Խաչատրյանին սեփականության իրավունքով պատկանող՝ Սպիտակ համայնքի Ս.Ավետիսյան փողոց, թիվ 158 հասցում գտնվող 06-006-0040-0056 կադաստրային ծածկագրով 0,13696 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա ինքնակամ կառուցված 83,74 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով բնակելի նշանակության շինությունները՝ 17,15 քառակուսի մետր մակերեսով անասնաշենքը, 10,48 քառակուսի մետր մակերեսով խոհանոցը, 9,26 քառակուսի մետր մակերեսով մառանը, 7,25 քառակուսի մետր մակերեսով սանհանգույցը, 23,76 քառակուսի մետր մակերեսով ծածկարանը, 15,84 քառակուսի մետր մակերեսով բաց պատշգամբը ճանաչել օրինական:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքի նկատմամբ ճանաչել Վիտխար Ասքանազի Խաչատրյանի սեփականության իրավունքը:

3. Սույն որոշմամբ ծագող իրավունքը ենթակա է պետական գրանցման:

4. Վիտխար Ասքանազի Խաչատրյանին.

1) համայնքի բյուջե վճարել 62 333 ՀՀ դրամ օրինականացման վճար:

2) Ընդունել ի գիտություն, որ սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը՝ 60-օրյա ժամկետում չվճարման դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

5. Քարտուղարության բաժնին՝ սույն որոշման մեկ օրինակը 5-օրյա ժամկետում տրամադրել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտե:

6. Սույն որոշման կատարման կազմակերպումը և հսկողությունը դնել աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետի վրա:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2021թ. փետրվարի 22
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«22» փետրվարի 2021թ. № 115

ԳԵՎՈՐԳ ՀԱՄԲԱՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՃՇԳՐՏՎԱԾ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ, ԲԱՑ ՊԱՏՇԳԱՄԲԸ, ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՁԵՂՆԱՀԱՐԿԸ, ՀԱՐԹԱԿԸ ԵՎ ՊԱՐԻՍՊԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերությամբ, 4-րդ մասով, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 7-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման» կարգի 8-րդ կետով և 13-կետի «ա» և «բ» ենթակետերով, հաշվի առնելով, որ Գևորգ Հայկի Համբարյանը սեփականության իրավունքով իրեն պատկանող՝ «ք.Սպիտակ, Առափնյա փողոց, թիվ 185» հասցեում գտնվող 06-006-0030-0015 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0,07273 հեկտար մակերեսով հողամասի վրա 2015 թվականին ինքնակամ կառուցել է 202,23 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով բնակելի տուն, 15,97 քառակուսի մետր մակերեսով բաց պատշգամբ, 98,62 քառակուսի մետր մակերեսով բնակելի տան ձեղնահարկ, 8,36 քառակուսի մետր մակերեսով հարթակ և 8,14 քառակուսի մետր մակերեսով պարիսպ, որոնց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 1954270 վկայականը, «Տեխպրոյեկտ» ՍՊԸ-ի եզրակացությունը, «Գ.Վեքիլյան» ԱՁ-ի կողմից տրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը և Գևորգ Հայկի Համբարյանի 2021 թվականի հունվարի 21-ի թիվ Հ-19/28 դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Հաստատել Գևորգ Հայկի Համբարյանին սեփականության իրավունքով պատկանող՝ Սպիտակ համայնքի Առափնյա փողոց, թիվ 185 հասցեում գտնվող բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի ճշգրտված հատակագիծը՝ 0,07273 հեկտար մակերեսով:

2. Գևորգ Հայկի Համբարյանին սեփականության իրավունքով պատկանող՝ «ք.Սպիտակ, Առափնյա փողոց, թիվ 185» հասցեում գտնվող 06-006-0030-0015 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0,07273 հեկտար մակերեսով հողամասի վրա կառուցված 202,23 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով բնակելի տունը, 15,97 քառակուսի մետր մակերեսով բաց պատշգամբը, 98,62 քառակուսի մետր մակերեսով բնակելի տան ձեղնահարկը, 8,36 քառակուսի մետր մակերեսով հարթակը և 8,14 քառակուսի մետր մակերեսով պարիսպը ճանաչել օրինական:

3. Սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքի նկատմամբ ճանաչել Գևորգ Հայկի Համբարյանի սեփականության իրավունքը:

4. Սույն որոշմամբ ծագող իրավունքը ենթակա է պետական գրանցման:

5. Գևորգ Հայկի Համբարյանին.

1) համայնքի բյուջե վճարել 343 493 ՀՀ դրամ օրինականացման վճար:

2) Ընդունել ի գիտություն, որ սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը՝ 60-օրյա ժամկետում չվճարման դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

6. Քարտուղարության բաժնին՝ սույն որոշման մեկ օրինակը 5-օրյա ժամկետում տրամադրել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտե:

7. Սույն որոշման կատարման կազմակերպումը և հսկողությունը դնել աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետի վրա:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2021թ. փետրվարի 22

ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«22» փետրվարի 2021թ. № 116

ԱՐԳԱՄ ՄԿՐՏՉԻ ԴԱՐՉԻՆՅԱՆԻՆ, ԱՐԳԱՄ ՍԱՄՎԵԼԻ ԷՏԻԲԱՐՅԱՆԻՆ, ՀԵՆՐԻԿ ՀՐԱՀԱՏԻ ՓԱՆՈՍՅԱՆԻՆ ԵՎ ՍԱՍՈՒՆ ԳԵՎՈՐԳԻ ՄԻՆԱՍՅԱՆԻՆ ԸՍՏ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԱՌՈՒՎԱՃԱՌՔԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՓՈԽԱՆՑՎԱԾ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՔՅԻ ՉԱՓԱԳՐՄԱՆ ՃՇԳՐՏՎԱԾ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հաշվի առնելով ՀՀ կադաստրի կոմիտեի 2021 թվականի փետրվարի 1-ի «Գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին» թիվ Կ-01022021-06-0197 որոշումը, հիմք ընդունելով «Գ.Վեքիլյան» Ա/Ձ-ի կողմից տրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը՝ ***որոշում եմ.***

1. Հաստատել Արգամ Մկրտչի Դարչինյանին, Արգամ Սամվելի Էտիբարյանին, Հենրիկ Հրահատի Փանոսյանին և Սասուն Գևորգի Մինասյանին ըստ առուվաճառքի պայմանագրի փոխանցված՝ Սպիտակ համայնքի Վանաձորի խճուղի, թիվ 7 հասցեում գտնվող բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի ճշգրտված հատակագիծը՝ 0,13868 հեկտար մակերեսով:

2. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետի վրա:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2021թ. փետրվարի 22
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«22» փետրվարի 2021թ. № 117

ՍԱՐԳԻՍ ՅՈՒՐԻԿԻ ՄԱԹՈՍՅԱՆԻՆ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԳՈՒՅՔ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 8-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման» կարգի 33.2-րդ, 34-րդ և 34.2-րդ կետերով, 35-րդ կետի «բ» և «դ» ենթակետով, հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 2021 թվականի հունվարի 21-ի թիվ 21012021-06-0033 վկայականը և Սարգիս Յուրիկի Մաթոսյանի ներկայացուցիչ Տիգրան Մաթոսյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող, «քաղաք Սպիտակ, Երևանյան խճուղի, թիվ 96» հասցեում գտնվող 06-006-0137-0032 կադաստրային ծածկագրով 0,14312 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասից 0,033698 հեկտար մակերեսով հողամասը կադաստրային արժեքով՝ 177 925 ՀՀ դրամ, իսկ 0,109422 հեկտար մակերեսով հողամասը կադաստրային արժեքի եռապատիկի չափով՝ 1 733 244 ՀՀ դրամ, օրինական ճանաչված 19,57 քառակուսի մետր մակերեսով հերթափոխի սենյակը, 19,97 քառակուսի մետր մակերեսով տնտեսական սենյակը և 101,7 քառակուսի մետր մակերեսով ավտոտնակը 554 661 ՀՀ դրամ արժեքով՝ որպես կառույցն իրականացրած անձի, գնման նախապատվության իրավունքով օտարել Սարգիս Յուրիկի Մաթոսյանի (ծնված 20.12.1974թ.):

2. Սարգիս Յուրիկի Մաթոսյանի հետ կնքել անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր, որից ծագող իրավունքն օրենքով սահմանված կարգով ենթակա է պետական գրանցման:

3. Աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետին և աշխատակազմի ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնի պետին՝ սահմանված կարգով փոփոխություն կատարել համայնքի հողային հաշվեկշռում և ամենամյա գույքագրման փաստաթղթերում:

4. Սույն որոշման կատարման կազմակերպումը և հսկողությունը դնել աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետի վրա:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2021թ.փետրվարի 22
ք.Սպիտակ